

չին և աշխատանքը աւելի յաջող կ'ըլլայ: Կարելի է՞ կարդալ անկողնին մէջ: Այո՛, — եթէ դուք ունիք շատ լաւ լուսաւորութիւն և տեղաւորուած էք ինչպէս բաղկաթուին մէջ, այսինքն ամբողջովին նստած: Ո՛չ, — եթէ դուք քիչ թէ շատ սլառկած էք:

ԲԺ. Յ. ՏԷՐ-ԴԱԻԹԵԱՆ

ՔՆՆԵԼ ՏՈՒՒՔ ՏՂՈՑ ԱԶՔԵՐԸ

Երախաները, առաջին մանկութեան շրջանին, կարճատես չեն: Աչքի այդ տկարութիւնը երևան կուգայ ետէն: Գերման բժիշկ մը, երախաներու պարտէզները յաճախելով, քննած է քան հազար մանուկ, որոնք հինգէն աւելի տարիք չունէին. և գտած է միայն մէկ հոգի կարճատես: Կը տեսնուի որ կարճատեսութիւնը երևան կուգայ աւելի պատանեկութեան շրջանին, դպրոցներու մէջ, ուր տղաքը կը ստիպուին կախել գլուխնին գիրքերու վրայ: Գերմանական վիճակագրութեան մը համաձայն, նախակրթարաններու աշակերտներուն հարիւրին վեցը կարճատես է, իսկ համալսարաններու աշակերտներուն՝ հարիւրին յիսունը:

Ի՞նչ է պատճառը:

Շատ կարդա՞լը: Ոչ: Այլ սխալ դիրքով կարդալը: Աչքը լաւ տեսնելու համար ինքզինք կը դնէ այնպիսի հեռաւորութեան մը մէջ, որ առարկային պատկերը երևի յստակ և որոշ: Արդ, ակնարոյժները ճշդած են, որ կարդալու և գրելու ատեն աչքն և թուղթին հեռաւորութիւնը պէտք է ըլլայ միայն երեսընհինգ սանթիմէթը: Երբ աչքը շատ կը մօտեցնենք, յիշեալ աստիճանէն աւելի մօտիկ, այն ատեն աչքը կ'երկարի, հետևաբար տեսողութեան բնական ուսպնեակը առարկաներու պատկերը կազմելու համար, պէտք ունի կամ մօտեցնելու աչքը, ինչոր աւելի կը ծանրացնէ կարճատեսութիւնը, կամ ապակիով դարմանելու այդ տկարութիւնը:

Նախ մայրերը, տուններուն մէջ, և յետոյ ուսուցիչները, դպրոցներուն մէջ, պէտք է ուշադրութիւն դարձնեն, որպէս զի տղաքը շատ չի մօտեցնեն իրենց աչքը գրասեղանին: Ի պահանջել հարկին, պէտք է քննել տան:

Խ. Խ. — ՊՈՒՔՐԷՇ. — Ձեզի պատահածը բացառութիւն մը չէ: Շատ անգամ կնօնօքը կը տեղաւորուի միզակնի գեղձերէն մէկ քանիին մէջ (folliculites) եւ շատ կը դժուարացնէ ջերմամիզութեան բուժումը: Պէտք է բանալ միզաբերանը աւելի լայն «երկաթ»ներ անցընելու համար: Եթէ այդ ալ չբաւէ, պէտք է uritroscoPie ընել եւ այրել կօնօօֆք պարփակող գեղձերը:

Տ... ԱԹԷՆՔ. — Ինքնաթելադրութեամբ կարելի է հետզհետէ բուժել ամէկ տեսակի տկարութիւնը: Կը ցաւիմք որ տեղ չունինք այս մասին խօսելու համար: